1. Գավառ համայնքի ղեկավարի 23 հոկտեմբերի 2024 թվականի N 2250-Ա որոշման նկարագրական մասում /«հիմք ընդունելով 04.09.2023թ. տրված Կարմիրգյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, գյուղ Կարմիրգյուղ Պ. Սևակի փողոց 1/2 հասցեի համասեփականատեր Արևիկ Մկուչի Թադևոսյանի /ծնված 27.03.1961թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Կարմիրգյուղ Պ. Սևակի փողոց 1/2 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.18 հա, ինչը փաստացի կազմում է 0.15000 հա»/ բառերի փոխարեն կարդալ՝ «հիմք ընդունելով 08.09.2026թ. տրված Կարմիրգյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, գյուղ Կարմիրգյուղ Պ. Սևակի փողոց 1/2 հասցեի համասեփականատեր Արևիկ Մկուչի Թադևոսյանի /ծնված 27.03.1961թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Կարմիրգյուղ Պ. Սևակի փողոց 1/2 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը

չափագրվել է, հատկացվել է 0.15 հա, ինչը փաստացի կազմում է 0.15000 հա»/
բառերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2026թ. սեպտեմբերի 09
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2026 թվականի N 1210-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 4
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԵՍՏ
ԳԱՌՆԻԿԻ ՍՈՍԵՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 02.12.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 03.06.2026թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Համեստ Գառնիկի Սոսեյանի /ծնված 18.04.1961թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, որոնց համաձայն Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների 2-րդ փողոց 4 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-001-0540-0056/, հատկացվել է 0.11 հա, ինչը փաստացի կազմում է 0.11000 հա, որը Համեստ Գառնիկի Սոսեյանին /ծնված 18.04.1961թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 347.54 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1975թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.11000 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**


1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների 2-րդ փողոց 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Համեստ Գառնիկի Սոսեյանի /ծնված 18.04.1961թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.11000 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 347.54 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1975թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց, 12-րդ նրբանցք, 14/1 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԲՈՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 09
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1211-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 9-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ 3
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹԱՄԱՐԱ ՀԱՅԿԱՐԱՄԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԱՐՄԻՆԵ ՄԱՆՎԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ԵՎ ԱՐԵՎԻԿ ՄԱՆՎԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.09505 ՀԱ
ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2 և 3 կետերի պահանջներով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 18.08.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը և Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 9-րդ նրբանցք 3 հասցեի գույքի համասեփականատեր Թամարա Հայկարամի Գևորգյանին /ծնված 24.02.1960թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 9-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է /ծածկագիր՝ 05-001-0089-0004/, հատկացվել է 0.16 հա, ինչը փաստացի կազմում է 0.287 հա, որից 0.19195 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Թամարա Հայկարամի Գևորգյանին /ծնված 24.02.1960թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասը, իսկ դրան կից փաստացի ավել օգտագործվող 0.09505 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և ուղղակի վաճառքի կարգով՝ 1 քմ-ի համար հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 154.5 ՀՀ դրամ, օտարել նշված հասցեի գույքի համասեփականատեր Թամարա Հայկարամի Գևորգյանին /ծնված 24.02.1960թ-ին/ և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 122.3 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների

/կառուցված 1960թ-ին/ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.287 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 9-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Թամարա Հայկարամի Գևորգյանի /ծնված 24.02.1960թ-ին/, Արմինե Մանվելի Ավետիսյանի /ծնված 25.02.1986թ-ին/, Արմեն Մանվելի Ավետիսյանի /ծնված 24.05.1987թ-ին/, Արևիկ Մանվելի Ավետիսյանի /ծնված 08.04.1990թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.16 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.03195 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.19195 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 122.3 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1960թ-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2023թ. կառուցված 81.7 քմ մակերեսով անավարտ շինությունը ճանաչել որպես ինքնակամ շինություն:
3. Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 9-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող 0.19195 հա հողատարածքին կից փաստացի ավել օգտագործվող 0.09505 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց, 9-րդ նրբանցք 3/1 հասցեն և ուղղակի վաճառքի կարգով օտարել Թամարա Հայկարամի Գևորգյանին /ծնված 24.02.1960թ-ին/, Արմինե Մանվելի Ավետիսյանին /ծնված 25.02.1986թ-ին/, Արմեն Մանվելի Ավետիսյանին /ծնված 24.05.1987թ-ին/, Արևիկ Մանվելի Ավետիսյանին /ծնված 08.04.1990թ-ին/ հողամասի 1 քմ-ի համար կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 154.5 /մեկ հարյուր հիսունչորս ամբողջ հինգ տասնորդական/ ՀՀ դրամ՝ ընդամենը $950.5 \times 154.5 = 146900$ /մեկ հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:
4. Բնակելի տանը տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց, 9-րդ նրբանցք, 3 հասցեն:
5. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով Թամարա Հայկարամի Գևորգյանի /ծնված 24.02.1960թ-ին/, Արմինե Մանվելի Ավետիսյանի /ծնված 25.02.1986թ-ին/, Արմեն Մանվելի Ավետիսյանի /ծնված 24.05.1987թ-ին/, Արևիկ Մանվելի Ավետիսյանի /ծնված 08.04.1990թ-ին/ հետ կնքելու 0.09505 հա մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի տեղակալի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1212-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Մ. ՍԻՐՈՒՆՅԱՆ ՓՈՂՈՑ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԵ ՎԱՆԻԿԻ ՀԱՅԹՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 12.05.1993թ. հողի Առուծախի պայմանագիրը, Հեղինե Վանիկի Հայթյանի անվամբ գրանցված Սեփականության վկայագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Մ. Սիրունյան փողոց 12 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, ըստ Առուծախի պայմանագրի հողամասի մակերեսը կազմում է 0.06 հա, ըստ չափագրության՝ 0.07910 հա, որը Հեղինե Վանիկի Հայթյանին /ծնված 07.03.1984թ-ին/ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 117.1 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1993թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.07910 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Մ. Սիրունյան փողոց 12 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հեղինե Վանիկի Հայթյանի /ծնված 07.03.1984թ-ին/

հողօգտագործման իրավունքը՝ 0.06 հա հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.01910 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.07910 հա ընդհանուր մակերեսով հողամասի և 1993թ-ին օրինական կառուցված 117.1 քմ ընդհանուր մակերեսով շինությունների նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Մ. Սիրունյան փողոց, 12 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 11
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1213-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ
ՆՐՔԱՆՑՔ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՐԹՈՒՐ ՍՈՒՐԵՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 26.08.

2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 14.08.2026թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց 1-ին նրբանցք 4 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.13 հա, ինչը փաստացի կազմում է 0.09335 հա, որը Արթուր Սուրենի Իսրայելյանին /ծնված 06.01.1962թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 359.0 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1976-1995թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09335 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց 1-ին նրբանցք 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արթուր Սուրենի Իսրայելյանի /ծնված 06.01.1962թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.09335 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 359.0 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1976-1995թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց, 1-ին նրբանցք, 4 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 11
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1214-Ա

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները, Գավառի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատողի հատուկ 11.09.2026թ .եզրակացությունը

Գավառի համայնքապետարանի 2026 թ. բյուջեով նախատեսված 09 բաժնի 4 խմբի 1 դասի /բարձրագույն մասնագիտական կրթություն/ գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությանը տրամադրել դրամական հատուցում՝ Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչների ուսման վարձը մարելու նպատակով

1.Գոգեյան Անի Սամվելի	200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
2.Ղարալղյան Ռուստամ Արսենի	200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
3.Դարբինյան Միլենա Միերի	200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
4.Գասպարյան Պարզիկ Տիգրանի	200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
5.Գյոզալյան Սամվել Արմենի	200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ

6.Տոնոյան Լիլյա Արծրունու

200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ

7.Առաքելյան Սաթենիկ Անդրանիկի

200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ

Ընդամենը՝ 1 400 000/մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 11
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 սեպտեմբերի 2026 թվականի N 1215-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՄ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ 13-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ 14
ՀԱՍՑԵՌՈՒՄ ԳՐԻԳՈՐ ՌԱԴԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՓԻՆԵ ԼԵՎԻԿԻ
ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14092026-05-0007 վկայականը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 05.03.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման 2026DUDMJM ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. 2012-2018թթ-ին ինքնակամ կառուցված 51.7 քմ արտաքին /43.6 քմ ներքին/
մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար
քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը $51.7 \times 1028 = 53200$ /հիսուներեք հազար երկու հարյուր/

ՀՀ դրամ; 44.5 քմ արտաքին /37.6 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, 401.2 քմ արտաքին /365.8 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և 4.65 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 616.8 /վեց հարյուր տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը $450.35 \times 616.8 = 277800$ /երկու հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2026թ. սեպտեմբերի 14
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 սեպտեմբերի 2026 թվականի N 1216-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 19 ՇԵՆՔ 3 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07092026-05-0013 վկայականը, որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 26.08.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026LQ3MKB ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Գավառ քաղաքի Ազատության փողոց 19 բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունները և նկատի ունենալով, որ կցակառույցը գտնվում է Գավառ քաղաքի Ազատության փողոց 19 շենքի սպասարկման համար նախատեսված հողամասում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. Գավառ քաղաքի Ազատության փողոց 19 շենքի 3 բնակարանին կից ինքնակամ կառուցված 13.6 քմ արտաքին մակերեսով կցակառույցը՝ 1 (մեկ) քառակուսի մետրի համար 362.7 (երեք հարյուր վաթսուներկու ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ, ընդամենը $13.6 \times 362.7 = 5000$ (հինգ հազար) ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 14
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 սեպտեմբերի 2026 թվականի N 1217-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 24 ՇԵՆՔ ԹԻՎ 1 ԽԱՆՈՒԹԻՆ ԿԻՑ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԱՎԱՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1046-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25.08.2026թ N Կ-25082026-05-0250 որոշումը, Գավառ համայնքի ղեկավարի 29 հուլիսի 2026 թվականի N 1046-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ղեկավարի 29 հուլիսի 2026 թվականի N 1046-Ա որոշման նկարագրական մասում /«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի/ արտահայտությունից հետո ավելացնել /«թիվ 28 ՇՄՇ ԲԲԸ-ի կողմից տրված ինքնակամ կցակառույցի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը և նկատի ունենալով, որ սպասարկման համար հատկացված 0.08999 հա հողամասը հանդիսանում է Ազատության փողոց թիվ 24 բազմաբնարական բնակելի շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքը» արտահայտությունը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 14
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 սեպտեմբերի 2026 թվականի N 1218-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 27,94759 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ <<ԷՅ
ԹԻ ՓԻ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի
Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ կետի,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286
որոշմամբ հաստատված կարգի 38-րդ կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք
ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 15-ի թիվ 159-Ա
որոշումը, **որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի
վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-
001-1183-0022 կադաստրային ծածկագրով, 27.94759 հա մակերեսով
գյուղատնտեսական նշանակության հողամասն /որից՝ արտաավայր 9,83541 հա,
վարելահող 18,11218 հա/ անհատույց օգտագործման իրավունքով, 20 տարի ժամկետով
տրամադրել «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամին՝ ծառատունկ իրականացնելու
և անտառապատ տարածքներն ավելացնելու նպատակով:
2. Հանձնարարել համայնքապետարանի գյուղատնտեսության և
բնապահպանության բաժնի պետ Արծրուն Դուրշույանին՝ օրենքով սահմանված
կարգով կնքել անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2026թ. սեպտեմբերի 14
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 սեպտեմբերի 2026 թվականի N 1219-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՆԺԵԼԱ
ԺՈՐԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՅԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21072026-05-0076 վկայականը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.027 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. Գավառ քաղաք Արծրունի եղբայրների փողոց 100 հասցեում 2011-2019թթ.

ինքնակամ կառուցված 103.6 քմ մակերեսով շինությունները՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը $103.6 \times 1209 = 125300$ /մեկ հարյուր քսանհինգ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ և ինքնակամ բացված դուռը՝ 1 /մեկ/ դռան համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը $1 \times 1209 = 1300$ /մեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 14
ք. Գավառ

